ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2016 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կանխավճարի տրամադրում
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 7.3 կետի համաձայն կնքվել է լրացուցիչ համաձայնագիր՝ համաձայն որի բանկային երաշխիքի առկայության դեպքում 1 359 800 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամից մինչև 795 867 (յոթ հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամի չափով կտրամադրվի կանխավճար:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.3 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
24.09.2016թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պետական գնման պայմանագրի

ք. Երևան 19.12.2017 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի միջև 24.09.2016թ. կնքած՝ ծառայությունների մատուցման N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 19.10.2017թ. կնքված N 2 համաձայնագրի

1.1.1 1.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1.4 1.1.2 կետում նշած 1 359 800 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամից մինչև 795 867 (յոթ հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամի չափով՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ ներկայացված կատարողականների չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012607 ՀՎՀՀ՝ 02565827	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ ք.Երևան, Հալաբյան 41 ա <<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/ճ Հ/Հ 2473700277210010 ՀՎՀՀ 01508665
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Գործադիր տնօրեն՝ _____ Գ.Արշակյան (ստորագրություն) Կ.Տ

Արդշինբանկ

№ 652-13222

«26» 12 2017 թ.

Բանկային երաշխիք ՀԲԵՆ17/116-37

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,

Ընդունելով ի գիտություն, որ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԿՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ, այսուհետ՝ «Պրինցիպալ», Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի հետ 24.09.2016 թվականին կնքված պետության կարիքների համար շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պետական գնման թիվ ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 և թիվ 2 համաձայնագրերով սահմանված կատարված աշխատանքների որակի ապահովման համար, այսուհետ՝ «Հիմնական պարտավորություն», պարտավոր է ՀՀ ֆինանսների նախարարությանը (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1») այսուհետ՝ «Բենեֆիցիար» ներկայացնել երաշխիք՝ 795,867.0 (յոթ հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ գումարի չափով, այսուհետ՝ «Երաշխիքային գումար», «Արդշինբանկ» ՓԲԸ, այսուհետ՝ «Երաշխիք տված անձ», ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալու իբրև Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների Երաշխիք տված անձ, ի ապահովումն Պրինցիպալի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում Երաշխիք տված անձը պարտավորվում է Բենեֆիցիարի կողմից վճարում իրականացնելու մասին ծանուցումն ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում քննարկել ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը և վճարել Բենեֆիցիարի պահանջած գումարը, եթե Բենեֆիցիարի պահանջը համապատասխանում է սույն երաշխիքի պայմաններին և ծանուցման մեջ նշված են Պրինցիպալի կողմից Հիմնական պարտավորությամբ ստանձնած պարտավորությունների խախտման հիմնավորումները, իսկ ծանուցմանը կցված են խախտումը հաստատող և ապացուցող բոլոր փաստաթղթերը: Նշված ժամկետում վճարում չկատարելու, Բենեֆիցիարի պահանջը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմքերով չմերժելու կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 391 հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծանուցումը Պրինցիպալին և Բենեֆիցիարին չներկայացնելու դեպքում Երաշխիք տված անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում առանց Երաշխիք տված անձին որևէ նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով Երաշխիքային գումարի սահմաններում գանձել համապատասխան գումար Երաշխիք տված անձի ցանկացած բանկում բացված ցանկացած հաշվից:

Երաշխիք տված անձի կողմից Բենեֆիցիարի պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում Երաշխիքային գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:

Սույն երաշխիքով Երաշխիք տված անձի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է Երաշխիքային գումարով՝ անկախ Հիմնական պարտավորությամբ նախատեսված ընդհանուր գումարի չափից:

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, 0015, ք. Երևան,
Գրիգոր Լուսավորչի փող., 13
Հեռ. (+37412) 222222
Ֆաքս. (+37412) 567486
e-mail: office@ardshinbank.am
URL: www.ardshinbank.am

Սույն երաշխիքով Երաշխիք տված անձը հանձնարարում է իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն երաշխիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխիք տված անձի հաշիվներից անվիճելի կարգով գանձել Երաշխիքային գումարի սահմաններում պահանջվող գումարը, եթե Երաշխիք տված անձը սույն երաշխիքում նշված ժամկետում չի կատարել ստանձնած պարտավորությունները:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տված անձի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տալու պահից, գործում է մինչև 30.04.2018թ. ներառյալ և դադարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 393 հոդվածով սահմանված հիմքերով:

Սույնով Բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից սույն Երաշխիքի բնօրինակը Երաշխիք տված անձին վերադարձվելու դեպքում դադարում են սույն Երաշխիքից բխող Երաշխիք տված անձի հանդեպ Բենեֆիցիարի իրավունքները:

Սույն երաշխիքը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Բենեֆիցիարը՝ ընդունելով սույն երաշխիքը, համաձայնվում է, որ սույն երաշխիքի հետ կապված տարաձայնությունները կամ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, դատական կամ արբիտրաժային կարգով: Բենեֆիցիարը՝ ընդունելով սույն երաշխիքը Երաշխիք տված անձի հետ գալիս է արբիտրաժային համաձայնության այն մասին, որ սույն Երաշխիքի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, կողմերից յուրաքանչյուրի պահանջով կարող է հանձնվել Հայաստանի Բանկերի Միության «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» հիմնարկին, այսուհետ՝ «Հիմնարկ», որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հիմնարկի կանոնադրությանը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին համապատասխան:

Հիմնարկի կանոնադրությունը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգը տեղակայված են Հայաստանի Բանկերի Միության պաշտոնական ինտերնետային www.uba.am կայքէջում:

Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Հայաստանի Բանկերի Միության ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին համապատասխան:

Վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:

Վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Կորյունի փողոց, 19ա շենք, 6-րդ հարկ»:

Եթե վեճը ենթակա դատական քննության, սույնով Երաշխիք տված անձը և Բենեֆիցիարը տալիս են իրենց համաձայնությունը գործով արագացված դատաքննություն կիրառելու համար:

Գործառնական տնօրենի տեղակալ-
Վարկերի կենտրոնացված ձևակերպումների և
ուղեկցման վարչության պետ՝ Իրինա Աբրամյան

Գլխավոր հաշվապահ՝ Լուսինե Ներսիսյան